ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 հուլիսի 2022 թվականի N 1035 -Ա

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից կազմակերպված «ԲՏԱՆ-ԲՄԱՇՁԲ-2022/01» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում ընտրված մասնակցի հետ պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) կնքելիս չեն կիրառվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները.

2) պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացվում են բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով՝ հատկացված ֆինանսական միջոցների մասով.

3) պայմանագրի՝ կատարող կողմին յուրաքանչյուր տարվա հատկացումների հաշվին համաձայնագրերի կնքման համար հիմք հանդիսացած ապահովումները հետ են վերադարձվում նոր հատկացումների շրջանակում վերջինիս կողմից համաձայնագիրը կնքելուց հետո:

2. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2021 թվականի դեկտեմբերի 30-ից փաստացի ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ